Աշտարակ քաղաքի կորիզի հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը

Ոսկանյան Ռ. Գ.
Հայաստանի Գեղարվեստի Պետական Ակադեմիա,
ասպիրանտ (Երևան, Հայաստան)
rubenvoskanyan.e34@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Աշտարակ, պաշտամունքային կառույց, թանգարան, թանգարանացում, եկեղեցի, բնակավայր, միջավայր, դիզայն, հուշարձան

Предложения по формированию Аштаракских городских историко-культурных памятников и их концепция

Восканян Р. Г.
Государственная академия художеств Армении, аспирант (Ереван, Армения)
rubenvoskanyan.e34@gmail.com

Аннотация: На основе всемирного опыта образования территорий историко-культурных памятников, а также имеющихся в Армении возможностей и требований, в статье представлены создание подобных музеев в городе Аштараке, его необходимость и особенности. Процесс создания музеев на территории историко-культурных памятников начался еще в далёком средневековье. В его основе были два важных фактора: сохранить исторический памятник и прилежащую к нему территорию с присущими ей природой и ландшафтом, а также предметы, имеющие некую художественную ценность, картины, церковно-культовые и исторические вещи – в их родной среде.
Учитывая то обстоятельство, что культовые построения Аштарака в основном расположены в одном районе и занимают одну историческую часть города, представляющую собой общую территорию, будущую музейную зону можно включить в границы этого района.
Ключевые слова: Аштарак, культовая постройка, музей, музеефикация, церковь, поселок, дизайн среды, памятник.

Proposals for the formation of Ashtarak city historical and cultural monuments and their concept

Voskanyan R. G.
State Academy of Fine Arts of Armenia, Postgraduate student (Yerevan, Armenia)
rubenvoskanyan.e34@gmail.com

Abstract: Based on the world experience in the formation of territories of historical and cultural monuments, as well as the opportunities and requirements in Armenia, the article presents the creation of such museums in Ashtarak, its need and features. The process of creating museums on the territory of historical and cultural monuments began in the distant Middle Ages. It was based on two important factors: to preserve the historical monument and the territory adjacent to it with its inherent nature and landscape, as well as objects of some kind of artistic value - paintings, church-religious and historical things - in their native environment.
Keywords. Ashtarak, religious building, museum, museumification, church, village, environment, design, monument.

Աշտարակ քաղաքի հուշարձանների տարածքների կազմակերպման դիզայներական կազմակերպման կարևորությունն ու արդիականությունը նշելու համար, դրանք ներկայացված են միջազգային և հայաստանյան զուգահեռների համատեքստում

Պատմամշակութային հուշարձանների տարածքում թանգարաններ ձևավորելու գործընթացը սկսվել է դեռևս հեռավոր միջնադարում: Դրա հիմքում եղել են երկու կարևոր գործոններ. պահպանել պատմական հուշարձանն ու դրան կից տարածքը՝ իրեն բնորոշ բնությամբ ու լանդշաֆտով, ինչպես նաև որոշակի գեղարվեստական արժեք ունեցող առարկաներ՝ նկարներ, եկեղեցական-պաշտամունքային և պատմական իրեր՝ իրենց հարազատ միջավայրում: Նման տեսակետից առաջին եկեղեցի-թանգարաններ առաջացել են Եվրոպայում՝ Իտալիայում, Ֆրանսիայում [**1**, էջ 334], ինչպես նաև Ռուսաստանում [**2**, էջ 10], որտեղ պաշտամունքային կառույցները վեր են ածվել տարբեր ֆունկցիոնալ

պահանջներ ներկայացնող թանգարանների: Այստեղից էլ հաստատվել է հուշարձանների թանգարանացման գաղափարը՝ մեծագույն չափով պահել ու պահպանել դրանց պատմամշակութային, գիտական և գեղարվեստական արժեքները իրենց պատմամշակութային և բնական միջավայրերում [**3**, էջ 13]: Թանգարանացման հիմնական նպատակն է անձեռնմխելի դարձնել անշարժ հուշարձանները /առանձին ճարտարապետական կառույցները, եկեղեցական պատմական և բնության համալիրները, արդյունաբերական շինությունները/, ինչպես նաև դրանց տարածքներում վերականգնել ու պահպանել ոչ նյութական ժառանգության /կենցաղային և ազգագրական ավանդույթները/ կապը պատմամշակութային միջավայրի և դրանց տարրերի միջև:

Հատկապես վերջին ժամանակներում հուշարձան-թանգարանների ստեղծումը պայմանավորվում է հիմնականում դրանց շրջապատող տարածքի, իսկ որոշ երկրներում նաև ներքին հարդարանքների և ունեցվածքի պահպանությամբ, քանի որ շատ եկեղեցիներում և վանական համալիրներում իրենց հիմնական պաշտպանությունն են գտել բարձր գեղարվեստական արժեք ունեցող տարաբնույթ ձեռագրեր, նկարներ, ծիսական գործածության դեկորատիվ-կիրառական արվեստի գործեր և այլն:

Հուշարձան-թանգարանների ստեղծման գործընթացն առավել ևս կապված է այդ շինության հետազոտության և դրա ներկայիս վիճակի պահպանության հետ: Դրա հետագա ցուցադրության համար անհրաժեշտ է իրականացնել կոնսերվացիոն աշխատանքներ: Դրանք հետագայում կարող են վերածվել վերականգնման գործընթացի, որոնք կարող են իրականացվել միայն հատուկ պատրաստված մասնագետների կողմից: Այստեղ անհրաժեշտություն կա նշել այդ երկու աշխատանքներին զուգահեռ անցկացվող վերլուծական և հետազոտական ուսումնասիրությունները, որոնց հիման վրա միայն կարելի է ստանալ հուշարձանի լիարժեք պատկերն ու առանձնահատկությունները: Եթե հուշարձանի կոնսերվացումն ու վերականգնումը կատարվում է մասնագետ ճարտարապետ-շինարարների մասնակցությամբ, ապա դրա տարածքում թանգարանի ստեղծման գործում մասնակցում են դիզայներներ, հնագետներ, պատմաբաններ, լեզվագետներ, ազգագրագետներ և այլ ոլորտի մասնագետներ, որոնք իրենց միասնական աշխատանքով լրացնում և հարստացնում են դրա բովանդակային ամբողջականությունը: Հոդվածում նմանօրինակ հուշարձանների համեմատական հետազոտության միջոցով վերլուծության են ենթարկվում Աշտարակ քաղաքի կորիզի հուշարձանները, որոնց մեջ հիմնական տեղ են գրավում եկեղեցական շինությունները և ներկայացվում է դրանց թանգարանացման դիզայներական կազմակերպման մի շարք առաջարկներ և դրանց հայեցակարգեր:

Հայաստանում պատմամշակութային թանգարանային համալիրների ամենավառ օրինակներից է Զվարթնոցի հուշարձանատարածքը, որը կազմավորվել է 20-րդ դարի սկզբին, նորաստեղծ Հայաստանում: Այնտեղ պեղումներ են կատարվել դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներից, որոնք կազմակերպված են եղել Խաչիկ Վարդապետ Դաղյանի կողմից: 1904 թվականի պեղումների աշխատանքներին միացել և հետագայում ամբողջովին ղեկավարել է Թորոս Թորամանյանը, որի ուսումնասիրությունների հիման վրա կատարված վերակազմության նախագիծը մնում է այդ հուշարձանի պահպանության հիմնական փաստաթուղթը: Հենց այդ աշխատանքների և դրանց արդյունքում հավաքված նյութերի հիման վրա էլ 1937 թվականի Հայաստանում առաջին անգամ հիմնադրվել է թանգարան՝ հարավային մասում կառուցված առանձին շինության տեսքով: Այն կառուցվել է ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանի նախագծով և հնագետ Կարո Ղաֆադարյանի ղեկավարությամբ և մինչև 1990-ականներն ունեցել է միակ փոքր ցուցադրությունը: 1988 թ. ճարտարապետ Լ.Սադոյանի նախագծով թանգարանային շենքն ընդարձակվել է: 2003 թ-ից թանգարանում ցուցադրության համար բացված են 3 սրահներ՝երկուսը մշտական, իսկ մեկը՝ ժամանակավոր և շրջիկ ցուցադրությունների կազմակերպման համար: Թանգարանի հիմնական և գիտաօժանդակ 2 ֆոնդերում, ինչպես նաև բաց ցուցադրությունում կան 10 հազարից ավելի միավոր նյութեր,

որոնցից առավել ամբողջականները տեղ են գտել մշտական ցուցադրության մեջ [**4**]:

Ուշագրավ և հայտնի համալիրներից է նաև Գառնիի հուշարձանատարածքը: Հատկանշական է, որ այս հուշարձանն ամբողջական զբաղեցնում է 3,5հա (պահպանության գոտու հետ միասին 5,1հա) տարածք և ներառում է պատմամշակութային մի շարք կառույցներ ու մշակութային արժեքներ՝ Գառնիի ամրոցը (մ.թ.ա. 3-2-րդ դդ.), հեթանոսական տաճարը (մ.թ. 77թ.), խճանկարով պատված հատակով բաղնիքը, պալատական շինությունների և հարակից տնտեսական կառույցների, Սբ. Սիոն եկեղեցու (7-րդ դ.) և կից մատուռի ավերակները, սեպագիր արձանագրությամբ քարակերտ «Վիշապ» կոթողը, հունարեն արձանագրությամբ քարը և այլն [**5**]: Գառնիի և Զվարթնոցի համալիրները պատմամշակութային հուշարձանների թանգարանացման հիանալի օրինակներ են, որոնք այժմ դարձել են պարտադիր այցելության վայրեր և այդպիսով խթանում են տուրիզմի աճին, նպաստում պատմամշակութային հուշարձանների պահպանությանն ու թանգարանցման արդիականացմանը:

Աշտարակ քաղաքի կորիզի պաշտամունքային հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը և դրանց կարևորությունը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ դրանց հետ:



Աշտարակի հրապարակի հուշարձանները (գծ. 1)

Աշտարակի հրապարակը կառուցված է երբեմնի Աշտարակ գյուղի գյուղամեջի տեղում, որը եղել է գյուղի ամենաբանուկ հատվածը:

Հրապարակում է գտնվում Աշտարակի քաղաքապետարանը և քաղաքային մշակույթի տունը (նկ. 1): Վերջինս կառուցվել է 1950 թվականին, ճարտարապետ Յուրի Յարալովի կողմից: Երկհարկանի այս կառույցն ունի բոլոր պայմանները քաղաքում մշակութային կյանքը զարգացնելու համար: Օրինակ, գլխավոր սրահում կազմակերպված են լուսային և ձայնային միջոցառումներ, հանդիսատեսների հատվածը աստիճանաձև վեր բարձրացող շարքեր են: Մշակույթի տունը գտնվում է բարվոք վիճակում և գործող է, սակայն այստեղ հազվադեպ են կազմակերպվում միջոցառումներ, ինչպես նաև բավական երկար ժամանակահատված վերանորոգման չի ենթարկվել և ունի թարմացման կարիք:

Նկ. 1. Աշտարակի մշակույթի տունը

Նկ. 2. Աշտարակ. Ուռուց

Հրապարակից վերև բարձրացող հատվածը կոչվում է Ուռուց (նկ. 2), որը այդպես է կոչվել այն ժամանակներից, երբ գյուղացիները դեռ նոր էին ընդլայնում իրենց բնակավայրը, որը սկսվում է Բերդաթաղից: Այն Աշտարակի կորիզի հուծարձաններն իրար կապող գլխավոր խաչմերուկն է: Տեղացիների

կողմից այն իր անունը ստացել է այդտեղ եղած ուռենիների առատությունից, որոնք ժամանակ առ ժամանակ կտրվելու արդյունքում այդտեղից վերացել են: Ուռուցով է բաժանվել և Աշտարակի տարբեր հատվածներ հասել մայր առուն, որը ինչպես արդեն նշվել է, մինչ այժմ քաղաքի ոռոգման ջրի միակ աղբյուրն է: Բացի այդ, ուռուցը տեղացիների հավաքվելու սիրելի վայրն է եղել:

Ժողովրդական բնակելի տների գոտին

Աշտարակի կորիզի հուշարձանների մեջ իրենց ուրույն տեղն ունեն քաղաքի ժողովրդական բնակելի տները, որոնք գտնվում են վերացման եզրին:

Աշտարակի տների կառուցման հիմնական տիպը միահարկ կամ երկհարկանի շինությունն է, որը բաղկացած է բուն բնակելի տնից, տնամերձ հողամասից և պտղատու կամ խաղողի այգով հողամասից: Միաշարք բնակելի տան տեղադրումը փողոցին զուգահեռ հնարավորություն է տվել տնամերձ հողամասն ու այգին հնարավորին չափ անջատել փողոցից: Եթե նույնիսկ այգիները դուրս են եղել այս տարածքներից, ապա տան ետնամասում անպայման եղել են տնամերձ հողամասեր, որոնց մակերեսները զբաղեցնում էին բուն տնից ավելի մեծ տարածք: 19-րդ դարի կեսին հայտնի վարպետների ձեռքերով կառուցված Հայկանուշ Զալոյի, Մ. Փարվանյանի, Ս. Թումանյանի, Վ. Ազատյանի, Ա. Արամյանի տները մանրամասն ուսումնասիրվել են և չափագրվել, իսկ Գր. Ղափանցյան (14, 18, 20), Սաժումյան (1, 12, 34) փողոցների, ինչպես նաև Աբովյան 22, Ալազանի 19-23 փողոցների համապատասխան տները և հատկապես հայ անվանի գրող Պերճ Պռոշյանի տունը (ներկայումս վեր է ածվել թանգարանի) ունեն հիմնականում նման հատակագծային լուծումներ և աչքի են ընկնում իրենց ինքնատիպ հորինվածքային հատկանիշներով և դեկորատիվ հարդարանքներով [**6**, էջ 43-55]:

Ինչպես նշվեց Աշտարակի կորիզի հուշարձանների մեջ հիմնական նշանակություն ունեն քաղաքի պաշտամունքային կառույցները (գծ. 2): Հատկապես ուշագրավ են Բերդաթաղում գտնվող երեք եկեղեցիները, որոնք կառուցված լինելով տարբեր ժամանակահատվածներում՝ ունեն իրար հետ կապվող անվանումներ: Այլ կերպ ասած՝ դիզայներական տեսանկյունից նայելիս, երեքը միասին հնարավոր է դիտարկել, որպես մեկ ամբողջական պատկեր, իր հորինվածքի կենտրոնով և շարժման տրամաբանական ուղղություններով, ինչը և նպաստում է Բերդաթաղը ընդհանուր թանգարանային համալիր դարձնելու գաղափարի առաջնահերթությանը: Դրանք են՝ Ծիրանավոր, Սպիտակավոր և Կարմրավոր Սբ. Աստվածածին եկեղեցիները:

Այդ եկեղեցիներից ամենահինը Ծիրանավոր Սբ. Աստվածածինն է (գծ. 3): Այն բազիլիկատիպ կառույց է: Հավանական ենթադրությամբ՝ եղել է հեթանոսական մեհյան, որը նախ վերափոխվել է եկեղեցու և ապա երրորդ անգամ էական, հիմնական վերակառուցման է ենթարկվել 5-րդ դարում, որի ընթացքում փայտե լայնանիստ ծածկը փոխարինվել է քարե թաղով: Այդ ընթացքում սրբարանը ստացել է եռանավ հորինվածք, որի գոգավոր թաղը փաթաթվել է երկայնական ու արևմտյան պատերի և վեց հզոր մույթերն ամրակցող կամարների վրա, իսկ արտաքինից ստացել է բրգաձև ճակտոնով քառալանջ կերպար, պայտաձև աբսիդի հետ հավելվել են կողային ուղղանկյուն խորաններ, փոքրացվել է հարավային մուտքը, դրվել է քարե միակտոր դուռ [**7**, էջ 106]: Ներկայումս եկեղեցին կիսաքանդ է, իսկ հուշարձանը շրջապատող տարածքը գտնվում է ոչ բարվոք վիճակում:

Գծ. 2.

Սպիտակավոր Սբ. Աստվածածին եկեղեցին (գծ. 3) Չնայած գիտական մտքի երերումներին, կառուցվել է 13-րդ դարի սկզբներին և, ինչպես նկատել է Ստ. Մնացականյանը, ունեցել է գմբեթակիր հորինվածք, որի հավանական վկայությունը բեմագոգը գոտկող կամարից դեպի ետ, արևմուտք ձգվող կամարաշարքի մնացորդն է, որի կոնստրուկտիվ

համակարգի վրա բարձրացել է թմբուկը [**7**, էջ 114]:

Կարմարավոր Սբ. Աստվածածին եկեղեցին (գծ. 4) կառուցվել է 7-րդ դարում: Այն արտաքինից ունի ընդգծված խաչաձևություն՝ ուղղագիծ թևաեզրերով: Խաչաթևերը երկլանջ են, չորս տումբաներն (գմբեթատակ անկյունային հանգույցները) ու ներսից գոգավոր գնդաձև վեղարը ծածկված են կարմրանարնջագույն կղմինդրով: Ճակտոնների ու թմբուկի չորսական նեղ լուսամուտները պսակված են պայտաձևուն քանդակազարդ կամարներով: Ճակտոնները պսակող քիվերը նշանակալիորեն դուրս են շեշտված հարթ մակերեսներից, որոնք պսակված են աճի ու փթթումի խորհուրդն ակնկալող, անեզր ու անվախճան զուգահեռների անհամար ռումբաների (զուգահեռանիստերի) շարքերով, իսկ ութանիստ թմբուկը վերին պռնկից պարփակող քիվաշարը՝ կոկիկ հղկված ականթաշարքերով, որոնք ատամնաշար անկյունակների հարակցությամբ հրապույր ու մոնումենտալություն են հաղորդում հուշարձանին [**7**, էջ 109]:

Գծ. 3.

Գծ. 4.

Աշտարակի պաշտամունքային ուշագրավ կառույցներից է նաև Սբ. Մարիանե եկեղեցին: Այն կառուցվել է 13-րդ դարում, ըստ ձախակողմյան խորանի վերևում փորագրված արձանագրության՝ Գրիգոր անունով վարդապետի առաջնորդության օրոք, ՉԼ=1281 թվականին: Իր ընդհանուր հորինվածքով և յուրովի վերասլաց համաչափություններով այն ակնհայտորեն վկայում է 13-րդ դարի հայ ճարտարապետների լայն ստեղծագործական որոնումների մասին [**8**, էջ 164]: Սկզբնական շրջանում եղել է աբեղաների վանք, ունեցել է հյուրատուն-եղբայրանոց, հետագայում վերածվել է սովորական ծխական եկեղեցու, որի համար եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց կառուցվել է եկեղեցու գավիթը [**9**, էջ 168]: 1839 թվականին գյուղացիների ջանքերով գավիթը վերանորոգվում է, իսկ հարավային թևի վրա աշտարակցի Գևորգ Փարավոնյանի միջոցներով կառուցվում է փոքր զանգակատուն, որի մասին եկեղեցու հարավային պատի վրա փորագրված է արձանագրություն [**9**, էջ 169]: Այդ հնագույն գավիթի պատերը զարդարված են եղել որմնանկարներով, որից պահպանվել է միայն եկեղեցու արևմտյան պատին նկարված հատվածը: Այն գործող չէր մինչև 2019 թվականը, երբ Արագածոտնի թեմի ատենապետ Գրիգոր Մովսիսյանի և իր ընտանիքի հովանավորությամբ վերսկսվեցին դրա վերանորոգման աշխատանքները: Գրեթե մեկ տարի տևած աշխատանքներից հետո, 2020 թվականի փետրվարի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ և Արագածոտնի թեմի հոգևոր դասի աջակցությամբ տեղի ունեցավ Սբ. Մարիանե եկեղեցու վերաօծումն ու վերաբացումը [**10**]:

Աշտարակի Սբ. Մարիանեն, թերևս, քաղաքի միակ բարեկարգ հոգևոր կառույցն է, որտեղ եռուն հոգևոր կյանքի և բուն եկեղեցու խնամքի հետ մեկտեղ, նաև ուշադրություն է դարձվում դրա միջավայրին:

Աշտարակ քաղաքի համար քաղաքաշինական զարգացման հեռանկարների ուսումնասիրման ու հաստատման համար խիստ կարևոր է պատմականորեն ձևավորված կենտրոնը, որտեղ կենտրոնացված է պատմամշակութային ժառանգությունը: Հայտնի է, որ Աշտարակը հնում եղել է գյուղ, որը

բաժանված է եղել հինգ թաղերի՝ Բերդաթաղ, Վերին թաղ(կամ ս. Մարիանէի թաղ), Ամենափրկչի թաղ, Կարմրավորի թաղ և Կավահանքի թաղ [**9**, էջ 165]: Հենց այդ հնագույն թաղերն են ձևավորում Աշտարակի պատմական կորիզը:

Աշտարակի համար հատկանշական է միջնադարյան պաշտամունքային ճարտարապետությունը, որն իր յուրատիպ առանձնահատկություններով առանձնանում է հայկական քաղաքների մեջ: Դրա պահպանությունն ու նոր քաղաքաշինական կառուցապատման սկզբունքներին հարմարեցումը հանդիսանում է քաղաքի տարածքային նախագծման և ժամանակակից օգտագործման կարևորագույն խնդիրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աշտարակի պաշտամունքային կառույցները հիմնականում գտնվում են մի թաղամասում և գրավում են ընդհանուր տարածք ներկայացնող քաղաքի պատմական մի հատված, ապագա թանգարանային գոտին կարելի է ներառել դրանք միավորող սահմաններում: Դրա համար միջավայրի դիզայնի առանձնահատկություններով անհրաժեշտ է կատարել նախնական հետազոտություն և այդ սահմաններում ներառել նաև պատմական և մշակութային արժեքներ ներկայացնող այլ նյութեր: Արդյունքում կստացվի բաց երկնքի տակ ներկայացվող թանգարանային համալիր, որի համար անհրաժեշտ են ներքոհիշյալ միջոցառումները և առարկայական միջավայրի տարրերը:

Աշտարակի կորիզի հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպման աշխատանքների մեջ են մտնում համապատասխան մակերեսների ստեղծումը, որոնցից են, օրինակ՝ մշակութային և գեղարվեստական իրերի ցուցադրման համար նախատեսված տաղավարները: Դրան զուգահեռ, պետք է սահմանափակել հուշարձան-թանգարանի պահպանվող տարածքը, մաքրել ու բարեկարգել տարածքը, տեղադրել լուսավորող սարքեր և ստեղծել համապատասխան հարմարություններ այցելուների համար: Նրանց տեղաշարժն ավելի հարմարավետ դարձնելու համար կարևոր է տեղեկատու վահանակների և ցուցադրությունների ուղղորդիչների (սլաքներ) տեղադրումը թանգարանի բոլոր նմուշների հետ ծանոթացման համար, որը նաև հնարավորություն կտա տեղեկանալու հուշարձանի պատմության հետ: Բացի այդ, անհրաժեշտ է նաև հանգստի տաղավարների տեղադրումը, սանիտարահիգիենիկ հատվածների և կայանատեղիների ստեղծումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Аверинцев С. С.,** Противо чуствование: Красная книга культуры. – М.: Издательство «Искусство», 1989:
2. **Формазов А. А**., Русское общество и охрана памятников культуры: Издание второе. – М.: Советская Россия, 1990:
3. **Каулен М. Е.,** Музеефикация историко-культурного наследия России. – М.: «Этерна», 2012:
4. **«Զվարթնոց» պատմամշակութային թանգարան արգելոց:** https://hushardzan.am/archives/category/zvartnots:
5. **ՀՀ մշակույթի նախարարություն, «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ:** Գառնիի պատմամշակութային թանգարան–արգելոց:
6. **Հակոբյան Է.,** Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1964:
7. **Սաղումյան Ս.,** Աշտարակ. պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998:
8. **Մնացականյան Ստ.,** Երևանը և նրա շրջակայքը: – Եր.: «Հայաստան» հրատարակչություն, 1971:
9. **Ճահազիզ Ե.,** Աշտարակի պատմությունը: Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1987
10. **Օծվեց Աշտարակի վերանորոգված Սուրբ Մարիանե եկեղեցին:** http://aragatsotn.mtad.am/news/item/2020/02/22/mariane2020/?fbclid=IwAR0gFEVdIMjf4j0MMVMO8Y4ljW4CveKfAHbUMNSSOdf4hOOyaG2wxTY11e4

Сдана/Հանձնվել է՝ 16.06.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 19.06.2020
Принята/Ընդունվել է՝ 22.06.2020